

Ճ Ա Շ Ա Կ

ՌԱՆԿՊԵՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԻԹԻՒՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Լ Ե Զ Ո Ւ Ի (1)

Հատակոտորք այսչափ են առ մեօք, այլ առ նախնիս մեր թուի թէ երկայնագոյն էին այս երգք: Թող զՎահագնէն, որպէս տեսաք ի վերոյ, զՏիգրանայ ասէ Խորենացին թէ գոյին երգք. « Զորմէ ասէին, » ասէ, « ի հինսն մեր որք բամբռամբն երգէին (այն է Տրուպատուրք Հայոց) լինել ամա և ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր » (Խոր. Ա. Իթ.). նոյնպէս զՍանատրիոյ, « Զորմէ առասպելաբանեն, « ասէ Խորենացին, « եթէ կենդանի ոմն նորահրաշ սպիտակ յաստուածոցն առաքեալ՝ պահէ զմանուկն: Բայց որչափ եղաք վերահասու, » յաւելու Խորենացին, « շուն սպիտակ (իբրեւ զչանին Սրբոյն Բերնարդոսի) ընդ խնդրակսն լեալ, պատահեաց մանկանն և դայեկին » (որոց մնացեալ էր ընդ կուտակօք ձեանց) (Խոր. Բ. 19.): Նոյն պատմիչ ասէ և զՍմբատայ բազրատունւոյ, զսպարապետէն Արտաշիսի. « Ըստ առասպելին (որով չիք տարակոյս թէ զերգս վիպասանաց ակնարկէ) ոչինչ կարի հեռի ի ճշմարտութենէն, ունէր հասակ անդամոց համեմատ քաջութեանն, » այլովքն հանդերձ: Իսկ զԱրտաշիսէ ասէ թէ գոյր ի Գողթան պատմութիւն, յոր առաքէ զՄեկենաս իւր զՍահակ. « Արտաշիսի վերջնոյ գործք բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն որ պատմին ի Գողթան. շինել զքաղաքն (Արտաշատ) և խնամութիւն ընդ Ալանս, և ծնունդք զարմիցն, և իբր սուփանք Սաթինկան ընդ վիշա-

(1) Տես զթիւ 9.

պաղունան առասպելաբար, այսինքն ընդ զարմն Աշխահակայ որ ունին զամենայն զառասորոտովն Մասեաց, մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութենէն, և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն, և նախանձ ընդ որդւոցն Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս ի ձեռն կանանց: Այս ամենայն յայտնի են քեզ յերգս վիպասանացն» (Խոր. Բ. 10թ.): Նաեւ Դոմետրոս Կորբուզոն, զօրավար Ներոնի, ի պատերազմին Հայոց ընդ Հռովմայեցիս յիշի յերգսն: «Չայս կամելով երգել յառասպելան, Դոմետ զոմն ասեն եկեալ այսր. այլ զհրաման նորա և զգօրսն սյլարանելով յանուն նորա կոչեն» (Խոր. Բ. ԾԳ.):

Այսպէս չիք տարակոյս թէ դոյր ի Հայս բանաստեղծութիւն, մանաւանդ քնարականն և, առաւել եւս, վիպասանականն կամ գիւցազնական, և այս տեւեաց դարս բարձրումն: Պատմութիւն լեզուին պահանջէ սակայն գիտել թէ երբ և զի՛արդ սխառ և բարձաւ Հայ վիպասանութիւնն, և զինչ էր բնութիւն և արուեստ նորա: Յառաջ քան զլուծանել զայս խնդիր, արժան է յիշել զԳողթն գաւառ որ թուի լեալ կեդրոն Հայ վիպասանութեան: Խորենացին յիշէ բազում անգամ զԳողթն իբրեւ գաւառ գինաւէտ, որոյ բնակիչք էին աւանդապահք հին երգոց վիպասանաց. «Յայտնեն զայս ճշմարտապէս և թուելեացն երգք զորս պահեցին ակործելով մարգիկ գինաւէտ գաւառին Գողթան» (Խոր. Ա. 1.): Այսպէս Խորենացին գերզատէր բարս Գողթնեցոց ընծայէ գինաւեստութեան գաւառին: Հաւանութեան է թէ մարգիկ գաւառին սիրէին զգիներբուս. հաւանութեան է նաեւ թէ Գողթնեցիքն, հանդերձ հին հեթանոսական երգովք զորս «պահեցին ակործելով,» պահէին նաեւ զուսումն և զպաշտօն հին կրօնից Հայոց, թերեւս դոյր իսկ անդ ազգ ինչ սպանդարամետական պաշտաման (orgies) որ անհետ լեալ թուի առ Մեսրոպաւ, որպէս տեսցուք խոնարհագոյն: Չբանից Խորենացոյն որ զերգս Գողթան համարի ծնունդ գինաւէտ գաւառի՝ զհետ զայ թէ յերգսն յայնսսիկ գոյին ոչ սակաւ քնարական և գուսանական միմունջք, դեղօնք, ցուցք. այլ գոյին նաեւ գիւցազներգութիւնք, որպիսի էր

այն երկայն վիպասանութիւնն զորոյ զնիւթն տայ համառօտիւ Խորենացին , յուղարկեալ զՄեկեհեաս իւր զՍահակ յայն վիպասանութիւն , իբրեւ յաղբիւր պատմութեան Արտաշիսի , որպէս տեսաք վերագոյնն : Բայց Գողթնեցիք ոչ պահէին միայն զհին երգս վիպասանաց , այլ և էին ի նոսա որ յօրինէին իսկ այնպիսի երգս , և էին վիպասանք . ուստի և Խորենացին կոչէ զնոսա երբէւ : « Զսմանէ երբէւն Գողթան առասպելաբանեն այսպէս » (Խոր. Բ. ԿԱ.) : Ուստի հաւանութեան թուի թէ մարդիկն զորս երգիչս կամ վիպասանս կոչէ Խորենացին՝ բնակէին ի Գողթան , որպէս Տրուպատուքն ի միջին դարս ի հարաւային Գաղիս , կամ թերեւս էին բուն իսկ Գողթնեցիք և երթային քաղաքէ ի քաղաք երգելով բամբուլ , որպէս հազներգուքն Յունաց , յորոց մին կարծի թէ էր Համբրոս , և յորոց երգոցն ժողովածոյ կազմեցան , ըստ ոմանց , յետոյ ուրեմն Յղիականն և Ողիսական : Զիք տարսկոյս թէ յերգոց վիպասանաց մերոց եւս , եթէ ունէաք ըզնոսա ողջ բովանդակ , կամ գէթ զմեծ մասն ինչ նոցա , յօրինէր գոնեայ փոքր Արտաշիսական մի կամ Վահէական :

Զհարգ և իցէ , Գողթան երգք ծանօթ և սիրելի էին ժողովրդեան : Խորենացին , որպէս յիշեցաք բազում անգամ , վկայէ թէ Սահակ Բագրատունի չէր անգէտ երգոցն զԱրտաշիսէ և զորդւոց նորա : « Արտաշիսի վերջնոյ դործք բազում ինչ յստնի են քեզ ի վիպասանացն որ պատմին ի Գողթան : » Եւ Բուզանդ վկայէ , որպէս տեսաք այլուր , թէ Հայք , ի փոքունց մինչեւ ցմեծամեծս , էին խանդակաթ կաթոգի զիւրեանց վիպասանութեանց յետ քրիստոնէութեան իսկ , և միտ դնէին նոցա մանաւանդ քան քրիստոնէական հաւատոյ վարդապետութեանց . « Բագմութիւն մարդկան , նախարարացն և կամ շինականութեանն , եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետացն ըստ նմանութեան ամպոցն իբրեւ զյորդահէղեղ ինչ անձրեւաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին , ոչ ոք ի նոցանէն , նշմարանս ինչ զսր լւէինն՝ կարէին ունել ի մտի : Վասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս , ընդ անօգուտս եւեթ զբօսեալ էին . զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք , և

նմին հուստացեալք , և ի նմին հանապազորդեալք » Բուզ. Գ. Ժ. Կ.) : Ստոյիկեան խիստ և ցամաք մտաց Բուզանդայ արդարեւ անպիտան և անօգուտ զբօսանք էին վիպասանութիւնքն ընդ որս կղկաթէին և՛ նախարարքն և՛ շինականութիւնն . բայց ոչ նոյնպէս աստեօտական գուռ ողւոյ այնր ժամանակի Հայոյն : Թէ երբ սկսան այս վիպասանութիւնք և երբ դադարեցան , չէ ստուգիւ յայտ . հայեցեալ սակայն ի նիւթ անդր յերգոց անտի ոմանց՝ թուի թէ սկիզբն նոցա էր հին յոյժ , թերեւս ի ժամանակէ անտի առաջնոյ Արարատեան թագաւորութեան : Եթէ , որպէս ասացաւ այլուր , Վարդգէս զորոյ զտուփանաց երգն յիշեցաք ի վերոյ՝ էր արդարեւ քեռայր Երուանդայ ուրումն Արարատեան թագաւորի , հօր Տիգրանայ (Խոր. Ա. Խի. Բ. ԿԵ.) բարեկամին Կիւրոսի (Քսենոփ. Խրտ. Կիւր. Գ. Ա.) . եթէ , ասեմք , ճշմարիտ է այս , և թուի թէ իցէ ճշմարիտ , ապա իբր վեցհարիւր ամօք յառաջ քան զՔրիստոս , ի հարկէ եւս իմն կանուխ , գոյին վիպասանք : Եթէ զՏրդատայ երգն եւս զոր բերաք ի վերոյ յԱգաթանգեղոս՝ համարեցուք գործ վիպասանաց , և չէ իսկ երգն օտար յողւոյն և յարուեստէ այնց երգչոց , հարկ է ասել թէ առ Քրիստոսնէութեամբ իսկ ունէր Գողթն զիւր երգիչան : Եւ զի այսպիսի ինչ վիպասանութիւն , հեթանոսական ձեւով , անբաժին է ի դիցապաշտութենէ , չէ առանց հաւանութեան կարծել թէ ի Գողթան գայր նաեւ դարոց դիցաբանական կամ քրմական , և զայս ակնարկէ թերեւս Խորենացոյն « աղանդն հեթանոսական , » զոր անհետացոյց Մեսրոպ ոչ առանց մղեւանդն նախանձու ըստ ողւոյ ժամանակին :

« Երթեալ (Մեսրոպայ) ի գաւառն Գողթան՝ որ ի նմա զօրեալ աղանդն հեթանոսական յաւուրցն Տրդատայ մինչեւ ցայն ժամանակս , զայն երարձ օգնականութեամբ ի յխանի դաւառին որում անուն էր Շարիթ » (Խոր. Գ. ԽԵ.) . և այլուր , « Անցանէ (Մեսրոպ) յառաջնոյ բնակութեան գաւառն Գողթն , քանդի մնացեալ (էր անդ) արմատ դառնութեան հեթանոսական աղանդոյ . զոր բնաբարձ արարեալ երանելոյն հանդերձ օգնականութեամբ հօրաբարոյին Գասց , որղւոյ Շարիթայ ,

իշխանի գաւառին , տեղեկանայր եւս եթէ չարեաց վարդապետացն նախագոյնք ի Բագրասականն (Աղուանից) են կողմանս . երթեալ զբազումս յուղղութիւն անէ , և զսակաւս անդարձս յիշխանութիւնն Հոնաց հալածականս առնէ » (Խոր. Գ. 4.) : Կորիւն ժամանակից և միջամուխ , զոր թուի համառօտեալ Խորենացւոյն , յիշէ կրկին երթս Մեսրոպայ ի Գողթն , չգիտէ սակայն ուրոյն աղանդ հեթանոսական թագուցեալ անդ , թէպէտ կոչէ զբնակիչսն « դիւապաշտս » , տալով խմանալ թէ գոյր տակաւին կռապաշտութիւն ի գաւառին : Գողթն սր թերեւս քան զայլ բազումս ի գաւառաց Ասսպուրականի և այլոց աշխարհաց էր բարեշէն բարենշան՝ ըստ դատման քրիստոնեաց մատենագրին մերոյ էր անկարգ , անդարման . « Այնուհետեւ դիմեալ երանելոյն իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան : Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան , այր երկիւզած և աստուածասէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի . իսկ երանելոյն վարժապետի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ՝ ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին , գերեալ զամենեսեան ի հայրենեաց առնորէնց , և ի ստոանայական դիւապաշտ սպասաւորութենէն ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր » (Կորիւն) : Ապա ի պատմելն զերկրորդ երթէն Մեսրոպայ ի Գողթն՝ ասէ . « Երթեալ իջանէր առ ռոս տանն Գողթան , յառաջին դաստակերտն իւր , և անդ ընդեւական սովորութեամբ ի կիրարկեալ զվարդապետութիւնն՝ հաւասարութեամբ բարեպաշտին Շարաթայ , լի առնէր զգաւառն ողջունիւ աւետարանին Քրիստոսի , . . . որում և հասեալ ժամանեալ հայրաբարոյցին Գոսայ , որդւոյ Շարաթայ , առն Քրիստոսասիրի , բազում սպասաւորութիւն իբրեւ հաւասարի որդւոյ վարդապետին տանէր » (Խոր.) : Ի վկայութեան այսց երկուց պատմաց եթէ գոյ ճշմարտութիւն , այս է թէ հին հեթանոսական քրմութիւնն որ մնացեալ էր ի Գողթան հանդերձ Հայ վրպասանութեամբ որ նորա հնադոյն առանձինն շնորհ էր՝ կրեաց զիւր վերջին հարուած ի ձեռն Մեսրոպայ , ոչ առանց ստատարութեան հըռ աշխարհական բազկի : Այսպէս բարձաւ Հայ

վիպասանութիւնն , բայց ոչ վէպք ի բերանոյ Հայ ժողովրդ-
եան , մինչեւ մնացորդաց նորա գտանել ոչ առ Բուզանդաւ
և Խորենացւով միայն , այլ և աստ ուրեմն առ Մագիսարո-
սիւ , այն է « Ո՛ր տայր ինձ գծուիս ծխանի »ն , որպէս տեսաք
ի վերոյ : Այն տողք չեն Մագիսարոսեան ուլունք , այլ ա-
կանք հին Հայերէն լեզուին . եթէ արժան իցէ ասել , մար-
գարիտք զորս հանէր Վիրգիլիոս յաղբեւացն Ննիիոսի : Ապա-
քէն չէր ներելի Մեսրոպայ կոյրն այն նախանձ ի ջնջել ի
սպառ զՀայ վիպասանութիւնն ի Գողթնէ , եթէ նոյն Մես-
րոպայ իւրով սքանչելի գիւտիւն հայերէն գրոյն չէր տուեալ
ծնունդ այնմ նորոյ ոսկեղինիկ մատենադրութեան , որ զլե-
զուն և զլեծութիւն հնոյն վիպասանութեան աւանդեաց մեզ
տոկոսիւն և չարիատիւ : — Այսչափ ինչ զհնութենէ և զբարձ-
մանէ վիպասանութեան : Եկեսցուք այժմ յարուեստ և ի բը-
նութիւն Հայ վիպասանութեան :

(Մատոռացի յատուջ)

Ա. Մ. Գ.

Վ Ա Ր Ք

Ս. ՄԵՍՐՈՊԱՅ ՄԱՇՔՈՅԻ (¹)

(ԸՍՏ ԿՈՐԵԱՆ)

Զկնի ժամանակաց ինչ ի վերայ անցանելոյ , հոգ ի մտի
արկեալ Մեծին Մեսրոպայ և վասն ազգին Վրաց՝ յօրինէր
նշանագիրս վրացերէն լեզուի , և ընդ իւր առեալ զընտիր
ընտիր յաչակերտաց իւրոց գնայր ի կողմանս Վրաց , առ
Բակրով արքայիւ , յորում ժամանակի եպիսկոպոս աշխարհին
էր Մովսէս ոմն անուն : Անդ « զիւր արուեստն առաջի ար-
կեալ՝ խրատէր յորդորելով » ի ձեռն թարգմանի ուրումն ,
որ կոչէր Զարայ (²) , « այր գրադէտ և ճմարտահաւատ » . և
արքայն Բակուր տայր հրաման ժողովել մանկունս « ի խառ-
նիճաղանջ գաւառաց իշխանութեան իւրոյ » և աւանդել ի
ձեռս Մաշթոցի , որ « արկանէր զնոսա ի բովս վարդապե-

(¹) Տես գժիւ Զ.

(²) Զամանէ եւ Խորենացի ասէ լինել Թարգման հայ եւ հելլեն
լեզուաց :

տութեանն» : Ի սմին ժամանակի Սամուէլ ոմն անուն , « այր սուրբ և բարեպաշտօն » , կարգեցաւ եպիսկոպոս տանն արքունի յաշխարհին Վրաց , որպէս և ինձ , « անարժանիս » , եղև հասանել ի կարգ եպիսկոպոսութեան :

Եւ յետ յարգարելոյ զիրս աստուածպաշտութեան ընդ ամենայն տեղիս աշխարհին , դառնայր Մեսրոպ ի Հայս և պատմէր Սահակոյ զամենայն զոր արար ի Վիրս առ ի բառնալ « զնոտիագործ » պաշտամունս նոցա :

Ի որհէր ապա Մեսրոպ և « վասն կէս ազգին » որ էր ընդ իշխանութեամբ Հռոմոց , և հանդերձ աշակերտօք բազմօք անցանէր ի կողմանս Յունաց : Վասն « բարեգործ » համբաւոյ նորս հռչակելոյ յառաջագոյն ընդ հիւսիսական կողմանս Հայոց , պատուէր « ընտանեբար » յեպիսկոպոսաց և յիշխանաց աշխարհին , մանաւանդ ի սպայապետէն , որում Անատոլիս անուն էր : Սա զգործս Մեսրոպայ գրով ցուցանէր կայսերն Թէոդոսի , որ տայր հրաման մեծարանաց անուամբ Ակոնի-ՄիՏ (1) զՍուրբն կոչել : Այլ Մեսրոպ տարեալ զբազմութիւն աշակերտացն ի Մեղիտինէ՝ յանձն առնէր Ալակեայ , եպիսկոպոսի քաղաքին , և վերսկացու նոցա Թողեալ անդ զՎեւոնդ՝ ինքն անկանէր յուզի ընդ Գերջանու եպիսկոպոսին , որ անուանէր Գինթ (2) , հանդերձ աշակերտօք ոմամբք , և հասանէին « ի քաղաքն Կոստանդինական » : Յանդիման լինէր անդ Ս. Մեսրոպ Թէոդոսի և Ստտիկեայ հայրապետին , և հրաման ելանէր յարքունուստ « ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել (զՄեսրոպ) դարմանօք կարգելովք » :

Ապա , « յետ Պասեքին կատարելոյ » , եցոյց Մեսրոպ

(1) Յունարէն ասի Ἀκόνιτης (-ης) , որ Թարգմանի առ մեզ Ակոնի , որ ասի , հիւսիս : Եւ ըստ Խորենացոյ՝ Ատտիկոս , եպիսկոպոսն Կոստանդնուպոսի , որ առ Թէոդոսի կայսերը , ի Յղթին զոր յղեաց առ Սահակ՝ վասն պատուոյ մեծարանաց եպիսկոպոսիս , Εξζλησιαστικός (Եւզլիսիաստիկոս) կոչէ զՄեսրոպ , այն է՝ Եւզլիսիոս կամ Եւզլիսիոս , անուն պատուոյ մեծ վարդապետի առ Յոնս , որ տուա Ս. Մեսրոպայ ի Բիւզանդիոն :

(2) Թուի իմն այլ ընդ այլոյ օրինակեալ ի ձեռագիրս անունը Գինթ , փոխանակ ասելոյ Գնիթ , որով անուամբ յիշէ երկիցս Խորենացի զեպիսկոպոսն Գերջանու :

կայսեր զոր ինչ խնդրէրն . և տուաւ նմա սակեր կայսերա-
զիր վասն աշակերտեցլոյ մանկուոյ Հայոց որ ընդ իշխանու-
թեամբ Յունաց , և վասն « եկեղեցեաց հաստատութեան » ,
այրովքն հանդերձ : Առեալ Մեսրոպ « զանընդդիմակաց հրա-
մանն »՝ արքունատուր դեսպակօք և չքով մեծաւ չու արար-
եալ յուղի անկեալ հանդերձ իւրովքն , և անցեալ ընդ քա-
ղաքս բազումս նովին փառօք՝ եկն եհաս առ Անատոլիս սպա-
րապետ Հայոց որ ընդ իշխանութեամբ Յունաց , և յանդի-
ման նմա լեալ եցոյց ի ձեռին զհրովարտակն կայսերագիր .
զոր առեալ Անատոլեայ փութայր « վաղվաղակի զհրամանն
կատարել » . հրեչտակս արձակէր « ի գաւառս կէս սպիլն
Հայոց » , ժողովէր մանկտի բազում , և ռոճիկս նոցա յար-
քունուսս կարգէր . իսկ Մեսրոպ զվարդապետութիւն իւր
« ժողովելոցն քաղցրացուցանէր » : Յետ այնորիկ ձեռն ար-
կանէր Սուրբն ածել յուզլութիւն զկամակոր ազանդաւորս
որ Բարբարիանոսքն կոչէին (1) . այլ ոչ ինչ գտեալ հնարս
փրկելոյ զնոսա քաղցրութեամբ՝ ի գործ արկանէր « զթշուա-
ռացուցիչ գաւազանն » , մատնէր զնոսա ի բանս և ի տան-
ջանս , մինչև « գունակ գունակ » խայտառակեալ՝ յաշխար-
հէն եւս ի բաց մերժէր :

(Մատոռացի յառաջ)

Յ. Գ.

ԿԱՆԱՅՔ ԱՌ ՆԱԽՆԻ ԳԵՐՄԱՆԱՅԻՍ

Անուն Տակիտեայ (2) , հոյակապ և անաչառ սպամնազրի
Հոռոմոց , յայտնի է բազմաց : Յառաջ քան զհարկանել նորա
ի գրի զՊարթևախանսն և զՏարեգիր՝ էր նորա գրեալ զՎարս Աթ-
րէկուայ , քաջի զօրավարին և իւրոյ աներոյն , և զԲարս Գերմանաց :
Ի վերջնում մատենի աստ , Տակիտոս նկարագրէ համառօտիւ
իմն զքնութիւն հողոյ և օդոյ աշխարհին Գերմանացւոց ,
սպատմէ զհանգամանս բարուց և կրօնից նոցա , և մանաւանդ

(1) Ի յոյն լեզու ասի βάρβαρος (բ-բ-ո-ոս) , այն է՝ բարբ , բարս , անուն
պղծագործ մծղնեայ աղանդոյն որ զամենայն իսկ զգարշուծիւնս համար-
ձակ գործել հրամայէր :

(2) Ծնաւ իբր յամին 54 և մնաւ ի 119 Յ. Գ.

քաջատես մտօք նշմարեալ ի հեռուսս զվտանգն սարաւնայեալ Հուովմայ ի հիւսիսոյ կուսէ՝ զդացուցանէ՝ զնա իւրոցն : Հուով՝ ի ժամանակի անդ յայնմիկ ընկղմեալ էր յապակա՜նութիւն . ո՛չ եւս էին վաղնջուց ժամանակացն բարբ ժուժկալք առաքինիք . ընչիցն ցանկութիւն փոխանակեալ էր զանշահախնդիր հայրենասիրութիւն նախնեաց , ընդ ընկերհաշտութեան ի բաց գնացեալ յաշխարհակալ ոստանէն անվիանդն արութիւն , և յաղթութիւն թուէր յուրաստ լինել յայնմանէ՝ զոր իբրև զորդի իւր սիրելի դգուեաց ընդ երկար : Տակիտոս ի գիրս անդ յանդիւման կացուցանէ զեղծ և մեզկացեալ բարուց իւրոցն քաղաքակցաց զանաւանդճ և զանարատ կեանս գերմանական ազանց , զաներկիւղ քաջութիւն նոցա , զմեծարանս նոցին առ կանայս , զորոց զպայման կենացն այնպէս քաջ ի բաց հեռի գտանէ ի Հոռոմոցն : Հանեալ ի դրոց աստի զառաջիկայ հատածն , յորում վկանանց հնոյն Գերմանիայ են բանք , մատուցանեմք ընթերցանելեաց Հանդիսիս :

« Հանդերձ կանանց ոչ այլակերպ ինչ է յարանցն՝ բայց այնու միայն զի կանայք արկանեն զանձամբ բազում անդամ լօղիկ կտաւեայ ներկեալ ծիրանեզոյն : Քանզի առանց թեզանեաց են հանդերձքն , թողուն զբազուկս մերկ մինչև յուս , և վերին մասն իսկ ընջացն մնայ հոլանի :

« Այլ պարկեշտ են ամուսնութիւնք , և այդ իսկ մանաւանդ արժանի գովութեան է ի բարս նոցա : Գրեաթէ , յամենայն ի բարբարիկ ազգաց , նոքա միայն շատանան միով եւեթ կնաւ , բաց ի սակաւուց ոմանց որ ոչ ի կարեացն բռնութենէ , այլ սակս ազնուականութեանն ածեալ ունին կանայս առուել քան զմի : Ոչ հարսն բերէ օժիտ առ փեսայ իւր , այլ փեսայ՝ հարսին : Եւ ծնողք օրիորդին և թայրաթոռք և մերձաւորք ժողովին տեսանել զնուէրս հարսանեացն , սրբ ո՛չ պաճուճանաց իրք են զորոց ա՛յնպէս կղկաթ կաթողի լինին կանայք , և ո՛չ զարդք ի պէտս հարսին , այլ եզինք , ճի սանձաւ թամբաւ կալմեալ , ասպար դեղարդեամբ և սուսերաւ : Յորժամ հաճոյ թուիցին նուէրքն , առաքի կոյսն ի սուն փեսային , որում և ինքն իսկ գէնս ինչ տայ ի պարգև : Այս

իսկ է ամրագոյն զօղ միութեան նոցին . սյսպիսիք են օրէնք նոցա խորհրդականք և նշանակք ամուսնութեան : Զի մի՛ գուցէ կին մարդ յապահովս կարծիցէ զանձն իւր յամենայն վասնդաց մարտի և ո՛չ երբեք պարտական հանդէս առնելոյ քաջութեան , նշանակքն այնոքիկ տան նմա ի միտ առնուլ՝ եթէ գաց հարրդ լինել վաստակոց և վասնդաց առն իւրոյ , և ի խաղաղութեան , որպէս և ի պատերազմի , տառապել և համարձակել իրբեւ զայր իւր : Զայս ինչ զգացուցանեն նմա եզանցն լուծք , երիվարն զինու զարդու վառեալ , զէնքն փոխանակեալք . հարկ է զնոյն կեանս կեալ . պարտ և պատշաճ է նովին մահուամբ մեռանել : Զպարգեւսն զոր ընդունի՝ պարտ է նմա անեղծս և անվճարս աւանդել ուստերց իւրոց , և ի ձեռն սոցա առ նուանս իւր , յորոց ապա ի թոռունս նորս անցանելոց են :

« Զայս օրինակ կեան պահպանեալք առաքինութեամբ իւրեանց : Յազդիս յայսմիկ , որոյ այնպէս մեծ է թիւ համարոյ նորա , հազիւ ուրեմն զործին շնութիւնք . իսկ և իսկ ի վերայ հասանէ պատիժ պատուհասին , և առն են իրաւունք խնդրելոյ զվրէժ յանցանացն : Աին մեղապարտ , մերկ ամենեւին ի զգեստուց , գլուխ զերծեալ՝ առանց հերաց , վտարի ի տանէ , առաջի ծնողաց և ամենայն սողգատուսմին , ի ձեռն առն իւրոյ որ հանէ արտաքս և գան հարեալ շրջեցուցանէ զնո ընդ աւանն : Արու՛մ շնացաւն միանգամ՝ չիք ներել թողութեան . ո՛չ գեղ , ո՛չ մանկութիւն , ո՛չ ընչեղութիւն օգնէ նմա ի գլխտ ամուսնոյ . . . : Առաւել առաքինութիւնս իսկ է տեսանել ի քաղաքս անդ յորս կուսից եւեթ՝ օրէն է ամուսնանալ . . . :

« Ի պատերազմի տանին կանայք առ մարտիկս դարման և բանս խրախուսանաց : Պատի զի եղեւ նոցա բազում անգամ յետս դարձուցանել և գումարեալ ժողովել վերստին բանակս խուճապեալս ի փախուստ յերեսոց թշնամոյն՝ արկանելով աղերս և պաղատանս , մատուցանելով փախտակից զլանջս իւրեանց և ցուցանելով զմտ առ կուրծս հասեալ զվտարանդութիւնն որ կարի իսկ ահագին է Գերմանաց վասն կանանց քան անձանց իսկ իւրեանց : Սմին իրի յերաշխիս հաւատար-

մութեան քաղաքաց նոցա սովոր եմք պահանջել օրիորդաց բարետոհմից դատանել ի թիւ սլատանդաց : Համարին իսկ այնպէս եթէ սուրբ ինչ և մարդարէական գոյ ի կանայս . ուստի բազում այն է զի խնդրեն խրատ ի նոցանէ և զխորհրդովք նոցա չառնեն զանց : Տեսաք առ Վեսպասիանոսիւ զՎելլետոս մեծարեալ զօրէն աստուծոյ առ բազումս ի գերմանական ցեղից : Պաշտօն հարեալ էր նոցա երբեմն Աւրինիայ և այլոց ի կանանց : »

Ռ. Յ. Պ.

Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

Հ Ա Ի Ա Տ Ա Լ Ս Ն Ո Տ Ե Ա Յ (1)

Նգնիկ որ այնպէս ողջամիտն է աստ ի մերժել զնոսի կարծիս աամկին , այլուր բազում ինչ ընծայէ դիւաց : Զհետ երթեալ կարծեաց նախնի հարց ոմանց թէ դեւք « կարող են զօդս գնդել և սլարզել , և ազգի ազգի կերպարանս երեւեցուցանել , » ասէ թէ համբարուն և յուշկապարիկն Յունաց , որպէս և պայն և առէզն Հայոց հանդերձ նոցին նմանեօք , ոչ այլ ինչ են եթէ ոչ դեւք երեւեալք յազգի ազգի կերպարանս ի խաբել զմարդիկ ոչ ի քուն միայն այլ եւ յարթնութեան , որպէս թէ Հայրն երկնաւոր որ « այնպէս սիրեաց զաշխարհ մինչև զորդին իւր միածին ետ » , արարեալ իցէ զմարդիկ խաղալիկս իւրոյ սալտամբ արարածոյն . հաւատք՝ որ սարդեաց եմուտ ոչ ի վարդապետութիւն եկեղեցոյ միայն , այլ և ի քաղաքային օրէնսդրութիւն Աւրոպական ազգաց մինչև ի մօտ ժամանակս , և եղև սլատանա բազում անմեղ արեանց հեղոյ , որպէս վիայէ պատմութիւնն զոր տեսցուք խոնարհագոյն : Գիտել սլարա է զի յառասպելս Յունաց յիշին ճիացուլք և սիրենք , որ ի մերում լեզուի կոչին յուշկապարիկ և համբարու : Զիացուլք էին , ըստ առասպելին , ճիւղալք իմն կէս մարդ և կէս ձի , և բնակէին բազմու-

(1) Տես զթիւ Զ.

Թեամբ ի Թեսաղիա : Կամեցեալ յափշտակել զկին Պիրիթեայ արքայի Ղապիթաց , ժողովուրդ բնակեալ նոյնպէս ի Թեսաղիա , վանեցան առ ժամանակ մի ի Ղապիթաց մեծաւ պատերազմաւ որ անուանի է յոյժ յառասպելս , և զոր Խորենացին ակնարկէ ի պատմութեան մենամարտիկ կռուոյն Տըրդատայ Բագրատունւոյ ընդ Բակրոյ նահապետին Սինեաց . « Անդ էր տեսանել , ասէ , նոր զոմն Ողիսեւս զՊենեթրպոյ գտեղէին սատակելով , և կամ զՂապիթեայցն և զյուշկապարկացն կռիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն » (Խոր. Բ. 49) : Ձիացուքն , սակցն , կամ յուշկապարիկք ոչ եթէ ճիւղազք ինչ էին մարդակերպք , այլ ճիւղորք քաջք որ ելանէին ստէպ յորս զլուց վայրենեաց , ուստի թուին ընկալեալ զանունն ճիւղուլ . ի հարսանիս Պիրիթեայ արքային Ղապիթաց , դրացեաց իւրեանց , կամեցեալ հափախել զհարսնն՝ ետուն պատճառս պատերազմին զոր յիշեցաք : Իսկ սիւնէնքն կամ համբարուք էին ըստ առասպելաց ազջիւղեք երեք , դըստերք Կալիոպոյ մուսայի , որոց բնակութիւն , ասեն , էր ի Սիկիլիա , մօտ ի հրուանդանն Պելոր (այժմ Փարոյի գլուխ) , և իւրեանց նուազօքն և երգօք , զի քնարահարք էին և սրնգահարք և երգէին քաղցրածայն , ապշեցուցեալ զնուորդս՝ սային ընկղմել նոցա ի ծով : Պատմութիւն համբարուացն , որպէս ասեն զխտունք , այլասացութիւն է , և է նշանակ մարդկեղէն կարեաց , որ ձգեալ զմեզ ի հրապոյրս իւրեանց , իբրև սաստիկ իմն հեղեղաւ առնեն դարահոս քաղաքէ՛ :

Այս է պատմութիւն յուշկապարկաց և համբարուաց : Թուի թէ գոյին և առ Եբրայեցիս՝ այսպիսի գուեհիկ առասպելք , ուստի Եսայի ի խօսելն զամացութենէ Բարեւոնի՝ բնակել ասէ յաւերակս նորա այնպիսի իմն ճիւղաց , զոր եօթանասունք թարգմանեցին յուշկապարիկս և համբարուս . « Անդ հանգիցեն համբարուք , և յուշկապարիկք բնակեացեն ի նմս » (Ես. փ. 21 , և այլուր) : « Դստերք համբարուաց » ստէպ յիշին ի գիրս , մանաւանդ ուր զողբոց և զկոծոց են բանք , և այս արդարև ի դէպ գայ յունական առասպելին զհամբարուաց : Այսպէս Յոբ ասէ . « Եղբայր եղէ համբարուաց . դարձաւ ի

սուգ քնար խմ, և երգ խմ ի լալիւն» (Յոր. 1. 29.) . և Մի-
քիս՝ ի խօսելն զՄամրնէ կործանելոյ, «կոծեսցի և ուրասցի,»
ասէ, « և արասցէ սուգ իբրև զգստերաց համբարուաց »
(Մկբ. Ա. 8.):

Արդ, Եզնիկ ասէ արդարև թէ առասպելք են այն ամե-
նայն և ոչ ճշմարիտ պատմութիւն, կեղծիս համարի սակայն
դիւաց, որպէս թէ դեւք իցեն որ երեւիցին յայն պէսպէս
կերպարանս, և այն ի կորզել զմարդիկ ի կռապաշտութիւն
և ի դիւսապաշտութիւն: «Դիւաց է, ասէ, կերպարանս կեր-
պարանս ցուցանել, և մարդիկ ըստ կերպարանացն անուանս
դնեն. որպէս յորժամ քաղաքք և դիւղք աւերեսցին, և
անդ դեւք բնակիցին, և կեղծս ի կեղծս յայտնիցին, և
մարդկան ըստ կեղծեաց նոցա անուանս եղեալ՝ զոմն յուշ-
կապարիկ, զոմն սլարիկ, զոմն համբարու կոչիցեն. նոյնպէս
և գրոց ըստ մարդկան կարծեաց եկեալ՝ առ ի նշանակելոյ
զսաստիւթիւն աւերածի աշխարհին, յուշկապարկաց ասեն
բնակել յաւերակն, իբրև զծովացուլն (Հայոց) զոր ի կովե-
ելէալ ասեն, և ի ծովակս բնակիցէ, և զսլայն իմն՝ ի մարդ-
կանէ, և զստղէզն՝ ի շանէ, և այն ոչ եթէ անձինք ինչ են,
այլ առասպելք և պառաւանց դրդջիւնք: Այլ և վիճեալ եւս
պնդին ի բանիցն վերայ: Մին ասէ թէ Ի մերում գետոյ ծո-
վացուլ զկով գործեաց, և զգոչիւնն հանապաղ մեք ըստք
ամենեքեան: Եւ միւսն ասէ. Զսլայն իսկ իմ աջօք տեսեալ
է: Միթէ և զարալիզէն եւս ոք կարիցէ ասել թէ և զայն
ուրուք տեսեալ իցէ. եթէ յառաջին ժամանակն արալէզք
լիզին զվրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէր ոչ լիզի-
ցեն և ողջացուցանիցեն. ոչ նոյն պատերազմունք են, և
նոյնպէս վրաւորք անկանին: Այլ և վիշապք, ասեն, և
նհանդք կեղծս ի կեղծս լինին: Վիշապն որ մարմնաւոր է՝
զիւր կերպարանսն ոչ կարէ փոխել: Զի եթէ հնար ինչ էր
մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ որ առա-
ւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանսն յինչ և կամէր .
այլ որպէս մարդոյ ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ յոր
և կամիցի, նոյնպէս և ոչ վիշապին: Նաև ոչ նհանգ ինչ անձ-
նաւոր գոյ, բայց եթէ դեւ ի տեղիս բնակեալ իցէ, և մերթ

կերպարանիցի , և մերթ մնաս գործիցէ : Եւ ոչ վիշապք
 զտոհմականն արդեանց կրեն , և ոչ գրաստ գոյ նոցա եթէ
 զարդիւնն ի կալոց ուրեք կրիցեն : Զի վիշապն որ ինքն
 գրաստ է , այնու զի անասուն և անխօսուն է , զիսորդ զայլ
 գրաստ վարիցէ : Զի վիշապի այլապէ ինչ բնութիւն չէ եթէ
 ոչ օձի , այն յայտ իսկ է : Եւ զօձ յաղթանդամ , կամ զգա-
 վան ինչ ծովածին , կոչեն գիրք վիշապ . որպէս զմարդ յաղ-
 թանդամ հսկայ անուանեն , նոյնպէս և զօձ ցամաքային ան-
 ճռունի , և զգազանն ծովական լեռնաձեւ , զկիտացն ասեմ
 և զդեղիինաց , վիշապս անուանեն : »

(Մատուցի յառաջ)

Ա. Մ. Գ.


Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ո Ւ Խ Ե Ի Վ Տ Ա Կ

Ուի ի լերանց բարձանց ի վայր
 Ահեղ գոչմամբ հոսեալ գեռայր .
 Եւ ամենայն խոյս տայր անտի .
 գնայր նըմին
 Սոսկումն ըզհետ . դաշտք ի թըն .
 դոջ :
 Բնդ ուին ընդ այն հըգօր ուժգին
 Անցս հատանել իշխէր որ ոչ .
 Այր ոմն եւեթ ի տես գողոց մտեալ ի
 նեղ .
 Անց , արկ արգել հինիցն ընդէմ
 գայն հեղեղ
 Ըսպառնալից գօռ մեծասաստ , այլ
 ոչ խոր .
 Ահ ապա լոկ կալաւ գայս այր :
 Այդ դէպ աջող , դէպ բախտաւոր ,
 Տայ խըրախոյս առնըն , զորոյ ցանկ
 սուրայր |

Հէնն այն բզհետ . այլ նա զկպեր
 Այլուր վտակի , որոյ լըռին
 Խաղաղ գնաց , քաղցր անխըռով
 Բնոյ պատկեր ,
 Անդէն տալ անց թըւէր նըմա յոյժ
 դիրին .
 Չէին ավունք անդ առապարք . ա-
 ւազուտ
 Ծաւալէր ջինջ : Եւ այրն եմուտ
 Անդըր ծիով , որ պահէ զնա ի հինից ,
 Այլ ոչ յալեաց դժոխոց . իշին
 Ի Ստիւքս ըմպել ջուր երկոթին .
 Զախողքն ի լիւզ , ի խորս անխոյս
 կայանից ,
 Այլազգ գետոց անցին ընդ ջուր :
 Այր անշըշունջ է վտանգալից .
 Ո՛չ նոյնպիսի որ ոչն է լուռ :
 ԼԵՅՕՒԹԷՆ

Յ. Գ.




ՔՐԻՔ ՈՂՈՐՄԱԾՈՒԹԵԱՆ

Բացիր , ո՛վ տըխտը վայր , ուր անորն անուրեք
 Պաշտի հիւանդն եւ խոց ի ճակատու ուրեք .
 Ուր կանայք անուանեալ Ողորմածուձեան քորք ,
 Են խանդակած զըթով վշտաց ըսպասաւորք :
 Յորոց է՝ որ ուսաւ ի սուրբ մինաստանի
 Կարգալ առ Երկնաւորն խընամ տանել երկրի :
 Ապա յապաստանէն սրբոյ ելեալ ի բաց ,
 Հարսն Աստուծոյ եղև ծառայ մահկանացուաց :
 Ո՛վ քաջութեան մեծի . զըթածն այն բարեբար ,
 Ի ժանտահոտ տեղւոջ ուր ցաւոց չիք համար ,
 Ի հոգալ ըզպիտոյս տառապելոց բիւրոց
 Ձընողկայ , ի դարման շրջի խըցէ ի խոց :
 Ըսպեղանեաւ պատէ մեղմով ըզվէրս նոցայ ,
 Ըզխշտեակն յարդարէ , ցաւոց նոցին վըկայ ,
 Ըզթշուաւն զայն խշտեակ որում ազահըն զուժ
 Ի սփոփանս կարգեալ է հազիւ ղոյզն եկամուտ :
 Մարդասիրութեան իսկ են այս կանայք պատկիր ,
 Եւ տառապալք ոյց են նորա վշտաց ընկեր՝
 Ըզզան ուրախութեամբ , սիրով իսկ արդարեւ ,
 ԹԵ ԲԱՐԵՐԱՐ ԷՐ ԿԻՆ ՈՐ ԵՏ ՆՈՅՍ ՁԱՐԵՒ :

ԼԸԳՈՒԿԵ

Ա. Մ. Գ.



ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Ձ Ո Ի Ի

Ա

ԸՍՏ ԱՆՁԻՆ ԱՌՆՈՒԼ . իրան առնել . շալիւ : *Ձմեռիճան
 ետ առնուլ ըստ անձինն : — *Ձգրունս քաղաքին առ ըստ
 անձին :

ԱՆՁՆԱՏՈՒՐ ԼԻՆԵԼ . իր անյը մարնել . կամա հնաշանդել :
 *Անձնատուրք եղեն բնակիչք Գարաւոնի առ Յեսու և սու
 իսրայէլ : — *Ոչ եղէ անձնատուր ի առնն Գաւթի :

ՅԱՆՁՈՒԿ ԱՐԿԱՆԵԼ . նեղս խոթել : *Ձի մի՛ կարի յանձուկ
 արկանիցեմք զձեզ :

ԱՆՁՈՒԿ ՈՒՆԵԼ . փոփոխել . կարօտնալ : *Անձուկ յոյժ ու-
նիմ ի բազում ամաց զալ առ ձեզ :

ԱՆՅՈՅՍ ԼԻՆԵԼ . յոյսը կորել : *Առաւել քան զկար մեր
ծանրացաք , մինչեւ անյոյս լինելոյ մեզ և ի կենաց :

ԱՆՇՆՈՐՀ ԱՌՆԵԼ . երախտաւորը շնանալ . բարեք բանի պեղ
չդնել : *Դորին խրատ անչնորհ առնել զգլխն իշխեաց : —
*Անչնորհ առնէր գտալիսն և զբերելիսն կարատոյն :

ՅԱՆՈՒԱՆԵՅ , ՅԱԿԱՆԵՅ ՅԱՆՈՒԱՆԵՅ . անանովը . պեղն է պեղը :
*Ձամենեսեան զնոսա յանուանէ կոչէ : — *Ողջոյն տաջիր սի-
րելեաց մերոց իւրաքանչիւր յանուանէ : — *Յախանէ յան-
ուանէ ինքնին Տէր մեր . . . սասց . Աբրահամ հայր ձեր
ցանկացաւ : — *Չմի ոք ի նոցանէ առանձին յախանէ յան-
ուանէ ծանուցանէր :

ԱՆՈՒՆ ԱՌՆԵԼ , ՀԱՆԵԼ . աչիկ կամ գէշ անան հանել : *Ա-
րասցուք մեզ անուն : — *Արար , ստէ , Դաւիթ անուն : —
*Հանիցեն անուն չար :

ԱՆՑ ԵՒ ԱՆՑ՝ ԱՆՑ ԵՒ ԱՆՑՍ ԱՌՆԵԼ . փոխն անցնել երթալ .
վեր է վերոյ նայել անցնել : *Մի՛ վայրապար անց և անց արաս-
ցուք զաւագակաւն : — *Մի՛ վեր ի վերոյ անց և անցս սո-
նիցէք :

ԱՆՑ ՏԱԼ . անցնելու ինչդ որալ . ճածֆայ որալ : *Ոչ կամեցաւ
Եղում տալ անց իտրայելի ընդ սահմանս իւր :

ԱՆՑԱՆԵԼ ԸՍՏ ՄԻՏՍ , ԸՍՏ ԿԱՐԾԻՍ . խեղէ փոքե վեր ըլ-
լալ : *Մեծութիւն չափոյն երկնից անցանէ ըստ միտս մարդ-
կան : — *Ըստ նոցա կարծիսն անցեալ :

ԱՆՑԱՆԵԼ ԱՆՑԻՑ . բաներ անցնել՝ հանդիպել : *Այսպիսի
անցք անցին ընդ մեզ : — *Սկսաւ ասել նոցա զինչ անցք
անցաներոց իցեն ընդ նա :

ԱՆՑԱՆԵԼ ԶՈՄԱՄԲ . աչի վերել , լսեանալ : *Որով ճա-
նապարհաւ անց հոգի Տեառն զինեւ , և խօսեցաւ ընդ քեզ :
— *Չորոյ անցանել զամենագէտ երեսօքն անհնար է :

Յ. Գ.

ԻՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԳԻՍՒՍ

Յ. ԳՈՒՐԳԷՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
